Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի « Ձրափիի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ–ում կա դասվարի 11 դասաժամ (մայրենի՝ 6դ/ժ, մաթեմատիկա՝ 5 դ/ժ), բնություն ՝ (5-րդ դասարան 3դ/ժ, 6-րդ դասարան 3դ/ժ), ես և շրջակա աշխարհը՝ (2-րդ դասարան 2դ/ժ), հայոց լեզու՝ (10-րդ դասարան 3դ/ժ), հայ գրականություն՝ (10-րդ դասարան 2դ/ժ), ռուսաց լեզու՝ (2-րդ դասարան՝4դ/ժ, 3-րդ դասարան 3դ/ժ, 4-րդ դասարան ՝2դ/ժ, 10-րդ դասարան 4դ/ժ), անգլերեն (5-րդ դասարան՝1դ/ժ) առարկաների ուսուցչի թափուր տեղ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում՝ (Ձև 1), 1 լուսանկար 3*4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրկույքի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև5)
-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույք:
- հրատարկված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
– ՀՀ կառավարության 2022 թ ապրիլի 28-ի թիվ 596–Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն, (մասնակցած լինելու դեպքում)
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թ.օգոստոսի 29–ից մինչև 2025 թ սեպտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00–ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 16-ին ժամը 14:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Ձրափիի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ձրափի, 7-րդ փ., շ. 19:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 35-35-39 հեռախոսահամարով:

<<Ձրափիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ–ի տնօրեն՝ / Մ. Հովհաննիսյան /